ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 մարտի ուրբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

33
(3064)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՊԱՐԳԵՎԱՏՐՎԱԾ ԶԵՆՔԵՐԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՆԱԽԱԳԻԾԸ ՄԵՐԺՎԵԼ Է

Ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը որոշել է սրբագրել Հայոց պատմությունը եւ նորանկախ Հայաստանի առաջնորդների կողմից պետության անունից որպես պարգեւատրում հանձնված զենքերը ուզում է հետ հավաքել: Այս նախագիծը առաջացրել է լուրջ դժգոհություններ ոչ միայն շահառուների շրջանում, այլեւ հենց ՔՊ ներսում:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս տարվա փետրվարի 21-ից հանրային քննարկման ներկայացված «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը նախատեսում է, որ պարգեւատրված կամ զենքով պարգեւատրված համարվող բոլոր անձինք պարտավոր են մինչեւ 2025 թվականի հուլիսի 1-ը ոստիկանություն ներկայացնել պարգեւատրական զենքերը, այդ թվում՝ մեկից ավելի անգամ պարգեւատրված լինելու դեպքում՝ երկրորդ եւ հաջորդ միավոր բոլոր պարգեւատրական զենքերը: Բացառություն են միայն այն մարդիկ, ովքեր ռազմականացված կազմակերպություններում 20 եւ ավելի տարի ծառայության ստաժ եւ առնվազն «մայոր» կոչում կամ դրան հավասարեցված դասային աստիճան ունեն. նրանք կարող են միայն մեկ պարգեւատրված զենք ունենալ: 92 տոկոսով մերժված այս նախագծով Արփինե Սարգսյանը ակնկալում է «զենքով պարգեւատրման գործընթացը դարձնել առավել արժանիքահեն եւ որոշակիացված, ապահովել հանրային անվտանգության կանխատեսելի՝ առավել բարձր մակարդակ, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում պարգեւատրական զենքերի կարգավիճակը բերել ճիշտ իրավական դիրքավորման: Միաժամանակ, շրջանառությունից դուրս կբերվեն այն զենքերը, որոնց պարգեւատրման հիմքերում բացակայում են ստանդարտներ»: Սա նշանակում է, որ այն մարդիկ, ովքեր իրենց տարբեր սխրանքների, հայրենանվեր գործունեության համար Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության ղեկավարների կողմից անցած տասնամյակներում պարգեւատրվել են զենքով, անարժան են եղել, պետք է հետ հավաքել պետական պարգեւները:

Ըստ Արփինե Սարգսյանի՝ այսուհետեւ պարգեւատրման ինստիտուտը կպահպանվի միայն ՀՀ վարչապետի դեպքում: Այսինքն՝ միայն Նիկոլ Փաշինյանի կողմից տրվելիք պարգեւատրումները կլինեն օրինական եւ արժանի: Սա ոչ այլ ինչ է, քան խտրական վերաբերմունք:

Պետության ներսում գործող բանդան դեռ անպատիժ է, ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրները փոխանցում են, որ իրավապահների գործուն ջանքերով պարագլուխները օրեր առաջ փախել են Հայաստանից: Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացրել էր, որ ԱԺ նախկին պատգամավոր Նահապետ Գեւորգյանն ու նրա 2 որդիները գազագողության մի մեծ մեխանիզմ են սարքել, գործում ներգրավել տարբեր մարդկանց, եւ նրանք խմբով չեն ենթարկվում ոչ միայն «Գազպրոմին»՝ որպես մատակարարի, այլեւ պետությանը՝ հարկային ծառայությանը, պետական մյուս մարմիններին: Երբ այս մասին հարց հնչեցրինք ՀՀ ՆԳՆ Արփինե Սարգսյանին, օրեր անց նախարարն օպերատիվ գործեց, հարուցեց վարույթ եւ ուղարկեց քննության՝ ՀՀ Քննչական կոմիտե: Այս կառույցը սկսեց քննել՝ բանդայի գործում ներգրավելով 50 քննիչների: Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ Ն. Գ.-ի 18 գազալցակայաններում հարկեր չեն վճարվել, որը ՊԵԿ-ի հաշվարկներով 1 մլրդ 79 մլն 341 հզր 404 ՀՀ դրամ է կազմում (մոտ 254 մլն ԱՄՆ դոլար): Սակայն «Ժողովուրդ» օրաթերթի իրազեկ աղբյուրները հայտնում են, որ իրականում ավելի մեծ գումար են պետությունից թաքցրել, ավելի մեծ թվով գազալցակայաններ են գործում, իսկ «Գազպրոմ Արմենիա» ընկերությանը ամսական մոտ 1.5 մլն ԱՄՆ դոլարի վնաս են հասցրել գրեթե մեկ տարի շարունակ: Եվ այս գործը բացահայտվեց «Ժողովուրդ» օրաթերթի հրապարակումների շնորհիվ:

ՀՀ Կառավարությանը մոտ կանգնած «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցում են, որ ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի հարցը կլուծվի մինչեւ մարտի 20-ը: Նիկոլ Փաշինյանը 10-օրյա ժամկետում պետք է ներկայացված 3 թեկնածուներից նշանակի մեկին: Հիշեցնենք, որ ՀԿ նախագահ Սասուն Խաչատրյանը, գիշերային մի հրաժեշտի ՍՄՍ ստանալով, «ինքնակամ» հեռացվեց աշխատանքից: Նոյեմբերից մինչեւ հիմա դեռ չի հաջողվում նշանակել ՀԿ նախագահ: Հիշեցնենք, որ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ դառնալու հայտ էր ներկայացրել 5 թեկնածու՝ Քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Նահապետյանը, վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար Պետրոս Մարտիրոսյանը, Հակակոռուպցիոն կոմիտեի քննչական երրորդ վարչության հատկապես կարեւոր գործերով ավագ քննիչ Արտաշես Մաիլյանը, Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության նախկին ավագ դատախազ Գեւորգ Քոչարյանը, փաստաբան, նախկին քննիչ ու դատախազ Կարեն Բատիկյանը: Վերջինիս կինը՝ Լուսինե Հովհաննիսյանը, Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր է: Կառավարությունը Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնում նշանակում կատարելու վերաբերյալ հարցը քննարկում եւ համապատասխան որոշում է կայացնում խորհրդի կողմից թեկնածուներին ներկայացնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում: Այդ ժամկետը լրանում է մարտի 20-ին, եւ Նիկոլ Փաշինյանը, ամենայն հավանականությամբ, Կառավարության նիստում կհնչեցնի նոր նախագահի անունը:

Մարտի 9-ին՝ կիրակի օրը, Նիկոլ Փաշինյանը իր ողջ թիմին հավաքել ու Գյումրի էր գնացել՝ Գյումրու եւ Փարաքարի ՏԻՄ ընտրություններին ընդառաջ գալա միջոցառում անցկացնելու համար: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացրել էր, որ Փաշինյանը ՔՊ վարչության անդամների հետ հանդիպման ժամանակ հայտարարել էր, որ պետք է երկու ընտրությունների կապակցությամբ դրամահավաք իրականացնել, ու դրա մեկնարկը տվել են կիրակի օրը: Մեր աղբյուրները նշում են, որ այս անգամ դրամահավաքը ՔՊ-ականներն իրականացրել են բացառապես անկանխիկ ձեւով. ՔՊ-ի հաշվին տարբեր գործարարներ, զանազան ոլորտների անձինք գումարներ են փոխանցել: Մենք տեղեկացանք նաեւ, որ դրամահավաքը մինչեւ հիմա շարունակվում է, ու մի քանի օր դեռ ՔՊ-ի հաշվին գումարներ կփոխանցեն: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր, ՔՊ կուսակցության վարչության փոխնախագահ Վահագն Ալեքսանյանից պարզել, թե ի վերջո ինչքան գումար են «հավաքագրել» այս օրերին ընտրությունների համար կազմակերպված դրամահավաքից, վերջինս ասաց՝ դեռեւս չեն ամփոփել, դեռ ոչ ոք տեղյակ չէ, թե ինչ չափի գումարի մասին է խոսքը: «Մենք առաջիկայում հաղորդագրություն կտանք, թե ինչքան գումար է հավաքվել», - «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցեց Ալեքսանյանը:

ՀԱՐՁԱԿՈՒՄ՝ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐԻ ՎՐԱ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՆՍԵՐ ՉՈՒՆԻ

Երեկ Շվեյցարիայի հյուպատոսարանի առջեւ բողոքացիները ակցիա են իրականացրել ի պաշտպանություն հայ գերիների: ArmLur.am-ն այս հարցերի վերաբերյալ զրուցել է ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանի հետ:

-Պարոն Աբրահամյան, պարզ դարձավ, որ Երեւանի նախկին քաղաքապետ, ԱԺ պատգամավոր Տարոն Մարգարյանի մասով դատախազ Աննա Վարդապետյանը միջնորդություն է ներկայացրել: Մի փոքր կխոսե՞ք այս մասին: Ճի՞շտ որոշում էր:

-Վերջին օրերին իշխանությունը վերաթարմացրել է իր գրոհները հանրապետականների նկատմամբ: Սրանք գործեր են, որ տարբեր փուլերում, տարբեր շրջաններ են անցել, բայց իշխանությունը, ըստ նպատակահարմարության, դրանք արխիվացնում է կամ ընթացիկ ռեժիմի մեջ է պահում:

Մեր դեպքում միանգամից երեք պրոցես է տեղի ունեցել. նախ Սերժ Սարգսյանին է մեղադրանք առաջադրվել, ապա գլխավոր դատախազությունը միջնորդություն է ներկայացրել՝ մեր գործընկեր Տարոն Մարգարյանին անձեռնմխելիությունից զրկելու, եւ Արմեն Աշոտյանի խափանման միջոցն է անփոփոխ թողնվել: Նա տնային կալանքի տակ է, ինչը էականորեն սահմանափակում է նրա քաղաքական իրավունքները, ազատ տեղաշարժի հնարավորությունը եւ ամենակարեւորը՝ քաղաքական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունները՝ հատկապես այն պարագայում, երբ Արմեն Աշոտյանը կուսակցության փոխնախագահն է, նաեւ համակարգում է արտաքին կապերը: Իշխանության կողմից երեք ուղղությամբ արշավ է ընթանում: Սա բացառապես կրում է քաղաքական բնույթ, այստեղ իրավական որեւէ պրոցես գոյություն չունի, որովհետեւ Տարոն Մարգարյանի ներկայությունն այստեղ լիովին զավեշտալի է: Ավելին՝ սա 2018 թվականին բացված գործ էր, որը փորձ է արվում վերաորակավորել, որովհետեւ այն հոդվածները, որոնք դրվել են, իրենց նպատակին չեն ծառայեցվել: Իրենց թիրախում եղել է հենց Տարոն Մարգարյանը:

Սերժ Սարգսյանի մասով խոսեմ. նրա դեմ մի քանի ուղղությունով հարձակումներ են գործվել դատախազության կողմից: Գործեր կան, որոնք կարճվել են, գործեր կան, որոնք նույնիսկ դատական քննարկման չեն հասել եւ, բնականաբար, իշխանական քարոզչությունը պահպանելու համար փորձում են նոր գործեր հայթայթել, որոնք որեւէ շանս չունեն մնալու: Բայց, բնականաբար, իշխանությունը պետք է ամեն ինչ անի եւ մինչեւ 2026 թվականի գործընթացներ այս թեման մշտապես պահի ակտիվ քննարկման փուլում:

-Ի՞նչ եք կարծում, այս քայլով իշխանությունը պատրաստվո՞ւմ է ընտրություններին, քանի որ լուրեր են շրջանառվում, որ ընդդիմադիրներին մաքրելով քաղաքական դաշտից՝ պատրաստվում են ընտրությունների:

-Ես կարծում եմ, որ միաժամանակ մի քանի խնդիր է լուծվում, կան նաեւ ընթացիկ մարտավարական հարցեր՝ պայմանավորված իշխանության ռեյտինգի աննախադեպ ցածր լինելու հանգամանքով: Դա ակնհայտ է նաեւ սոցիոլոգիական տարբեր հարցումներում: Այն խմբակը, որ եկել է 2018 թվականին իշխանության, եւ՛ մինչեւ 18-ը եւ՛ դրանից հետո ներկայացրել է կեղծ մեղադրանքներ, որոնք այս ընթացքում չեն կարողացել հիմնավորել: Ավելին՝ այդ պրոցեսների փորձը ցույց է տվել, որ իշխանությունը այն մարդկանց, ում մեղադրանք է ներկայացրել, չի կարողացել հիմնավորել, որովհետեւ այդ հիմնավորումները պարզապես բացակայել են: Բնականաբար, որպեսզի շատ ավելի ակնհայտ չդառնան քաղաքական հետապնդումները, իշխանությունը փորձում է անընդհատ ինչ-որ նոր բաներ բերել առաջին պլան:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ԳԵՐԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԽՈՐՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԸ ՊԻՏԻ ՔՆՆՎԵՆ

Եվրամիության էներգետիկայի հարցերով հանձնակատար Դան Յորգենսենը հայտարարել է, որ Բաքվում պահվող հայ գերիների նկատմամբ խոշտանգումների եւ անմարդկային վերաբերմունքի վերաբերյալ զեկույցները պետք է անհապաղ ու անկողմնակալ ձեւով հետաքննվեն:

Յորգենսենն այդ մասին ասել է Եվրախորհրդարանում հայ գերիների վերաբերյալ հրատապ բանաձեւի քննարկման ժամանակ: «Եվրոպական հանձնաժողովը հետեւում է Լեռնային Ղարաբաղից 16 հայ մեղադրյալների դեմ ընթացող դատավարություններին, որոնք մեկնարկել են այս տարվա հունվարի 17-ից Բաքվի ռազմական դատարանում: Մենք տեղյակ ենք, որ մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպությունները մտահոգություն են հայտնել այս դատավարությունների արդարության եւ մեղադրյալների նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ: Շատերդ նույն մտահոգություններն եք արտահայտել, եւ այսօր մենք այս հարցերը շատ լուրջ ենք ընդունում՝ հետեւելով զարգացումներին: Արդար դատաքննության իրավունքը պետք է երաշխավորվի եւ հարգվի: Եվրամիության հատուկ ներկայացուցիչը Հարավային Կովկասում նույնպես ուշադիր հետեւում է այս հարցերին եւ մեր մտահոգությունները փոխանցում Բաքվի իշխանություններին»,-ասել է հանձնակատար Յորգենսենը՝ հավելելով, որ ԵՄ հարաբերություններն Ադրբեջանի հետ հիմնված են սկզբունքների վրա, որոնց երկու կողմերն էլ պարտավորվել են հավատարիմ մնալ: Առաջին հերթին դա մարդու իրավունքների եւ օրենքի գերակայության հարգումն է:

Հանձնակատար Յորգենսենը հավելել է, որ ԵՄ-ն շարունակելու է կոչ անել, որպեսզի Հայաստանն ու Ադրբեջանը, հիմնվելով արդեն ձեռք բերված հաջողությունների վրա, շարունակեն առաջընթացը հարաբերությունների ամբողջական կարգավորման ուղղությամբ:

«Եվրամիությունը կշարունակի աջակցել այս գործընթացին՝ կիրառելով մեր ունեցած բոլոր գործիքները: Մենք պատրաստ ենք աջակցել կողմերին երկխոսության մեջ՝ ուղղված երկարատեւ եւ կայուն խաղաղության հաստատմանը», - եզրափակել է Յորգենսենը:

ԸՍՏ ԱԼԻԵՎԻ՝ ԵԿԵԼ ԵՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Ըստ «ՌԻԱ Նովոստիի» հաղորդած տեղեկությունների՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հայտարարել է, որ Բաքուն եւ Երեւանը համաձայնության են եկել խաղաղության պայմանագրի մեծ մասի շուրջ:

«Մենք պետք է նայենք ապագային: Մենք պետք է խաղաղություն հաստատենք Հարավային Կովկասում: Ադրբեջանը հավատարիմ է խաղաղ գործընթացին... Ներկայումս քննարկումներ են ընթանում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղ պայմանագրի շուրջ, որի կետերի մեծ մասն արդեն համաձայնեցված է», - ասել է Ալիեւը՝ ելույթ ունենալով Բաքվի 12-րդ Գլոբալ ֆորումի բացման արարողությանը:

2024 թվականի դեկտեմբերին «ՌԻԱ Նովոստիին» տված հարցազրույցում Ալիեւը հայտարարել էր, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի նախագծի 17 հոդվածներից համաձայնեցվել է 15-ը, մնացել է երկուսը: Իսկ մնացած հոդվածներից մեկը վերաբերում է միմյանց դեմ միջազգային դատական հայցերից ձեռնպահ մնալուն: Ավելի ուշ Փաշինյանը ընդունելի է անվանել այն գաղափարը, որ Երեւանն ու Բաքուն խաղաղության պայմանագիր ստորագրելուց հետո հանեն միմյանց նկատմամբ միջազգային պահանջները:

ԻՆՉ ԲԱՆԱՁԵՎ Է ԸՆԴՈՒՆԵԼ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

Ֆրանսիայի Ազգային ժողովն ընդունել է Ուկրաինային օգնությունն ավելացնելու մասին բանաձեւ, որի շրջանակում առաջարկվում է առգրավել ռուսական սառեցված ակտիվները:

Նիստը հեռարձակվել է խորհրդարանի ստորին պալատի կայքում: Ինչպես հայտնել է Ազգային ժողովի նախագահ Յաել Բրոն Պիվեն, փաստաթուղթը պաշտպանել է 288 պատգամավոր: Բանաձեւին դեմ է արտահայտվել 54 խորհրդարանական:

Փետրվարի վերջին Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը հայտարարել էր, որ ռուսական սառեցված ակտիվների առգրավումը հնարավոր չէ, քանի որ դա հակասում է միջազգային իրավունքին: Ֆրանսիայի ղեկավարն ընդգծել է, որ այդ հարցը պետք է դիտարկել բացառապես ուկրաինական հակամարտության կարգավորման խաղաղ բանակցությունների շրջանակում:

Հիշեցնենք, որ մարտի 12-ին Մակրոնը հանձնարարել է հանրապետության ֆինանսների նախարարությանը ուշադիր ուսումնասիրել Ռուսաստանի սառեցված ակտիվների հնարավոր բռնագրավման հետեւանքները:

Ֆրանսիայի կառավարության խոսնակ Սոֆի Պրիման նշել է, որ Փարիզի ներկայիս դիրքորոշումն այն է, որ ակտիվների բռնագրավման հարց ներկայում չկա:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ

Կառավարությունը երեկ բացասական եզրակացություն տվեց «Հայաստան» ընդդիմադիր խմբակցության առաջարկին՝ ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման համակարգը չեղարկելու վերաբերյալ: Այս եզրակացությունը ներառվել է կառավարության՝ չզեկուցվող հարցերի շարքում: Կառավարության գնահատմամբ՝ այս առաջարկը սկզբունքորեն անընդունելի է: «Նախագիծը չի բխում կառավարության 2021-2026 թվականների ծրագրով սահմանված քաղաքականության ուղղություններից, որոնց շրջանակում նախատեսվում է ներդնել ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման արդյունավետ համակարգ: Այս փոփոխությունը կնպաստի նաեւ միջազգային փորձում լայնորեն կիրառվող սոցիալական կրեդիտների համակարգի ներդրմանը»,- նշված է կառավարության որոշման մեջ:

Ընդդիմադիրների կարծիքով՝ ֆիզիկական անձանց եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգը ժամանակավրեպ է, իր նպատակին հասնելու տեսանկյունից՝ ոչ լիարժեք եւ ոչ համարժեք: Բացի այդ, ըստ ընդդիմության, այն քաղաքացիների համար վերածվելու է նոր ու ավելորդ վարչարարության, անիմաստ պարտավորության եւ տուգանքների աղբյուրի:

«Հայաստան» խմբակցությունը նաեւ պնդում է, որ այս համակարգը պետության համար կդառնա արդեն իսկ առկա տեղեկատվության կրկնակի կամ եռակի հավաքագրման անիմաստ եւ անարդյունավետ գործընթաց: Բացի այդ, ընդգծվում է, որ առկա են մի շարք տեխնիկական եւ բովանդակային չլուծված խնդիրներ, որոնք վկայում են, որ հարկային մարմինները եւս պատրաստ չեն հայտարարագրերը ընդունելու եւ մշակելու:

ՊԱՏԵՐԱԶՄ ՉԻ ՈՒԶՈՒՄ

Իրանը պատերազմի չի ձգտում, բայց եթե Ամերիկայի Միացյալ Նահանգները սխալ քայլեր ձեռնարկի, ապա հակաքայլերը վճռական կլինեն: Ինչպես փոխանցում է ՏԱՍՍ-ը, այս մասին հայտարարել է Իրանի գերագույն առաջնորդ այաթոլլա Ալի Խամենեին: «Իրանը պատերազմի չի ձգտում, բայց եթե ամերիկացիները եւ նրանց գործակալները սխալ գործողություններ ձեռնարկեն, Իրանի հակաքայլերը կլինեն վճռական եւ հստակ: Եվ ամենաշատը կտուժի ԱՄՆ-ն»,- Խամենեիի խոսքն է մեջբերել ISNA գործակալությունը:

523 ԿՈՂՄ, 3 ԴԵՄ. ԲԱՆԱՁԵՎ

ԵՄ-Ն ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է ԱԴՐԲԵՋԱՆԻ ՔԱՅԼԵՐԸ

Եվրոպական խորհրդարանը Բաքվում ապօրինաբար պահվող հայ գերիների վերաբերյալ հրատապ ընթացակարգի ներքո ընդունած բանաձեւով դատապարտում է Ադրբեջանի կողմից հայ պատանդների հանդեպ անմարդկային վերաբերմունքն ու պահանջում նրանց անհապաղ ու անվերապահ ազատ արձակել:

«Ադրբեջանի կողմից հայ պատանդների, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի բարձրաստիճան քաղաքական ներկայացուցիչների ապօրինի ձերբակալումը եւ նրանց դեմ շինծու դատավարությունները» խորագրով բանաձեւն ընդունվեց 523 կողմ, 3 դեմ, եւ 84 ձեռնպահ ձայների համամասնությամբ:

Ընդունված բանաձեւով Եվրոպական խորհրդարանի պատգամավորները խոր մտահոգություն են հայտնում խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի առնչությամբ եւ կոչ են անում անկախ հետաքննություն անցկացնել այդ խախտումների վերաբերյալ: Ադրբեջանի իշխանություններին կոչ է արվում կատարել իրենց միջազգային պարտավորությունները, ներառյալ՝ Ժնեւի կոնվենցիան եւ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան:

Եվրոպական խորհրդարանի պատգամավորները շեշտադրում են հայ գերիներին ազատ արձակելու, նրանց նկատմամբ դաժան վերաբերմունքի համար պատասխանատու անձանց պատասխանատվության ենթարկելու դիվանագիտական ջանքերի հրատապ անհրաժեշտությունը:

Բանաձեւը ԵՄ-ից եւ միջազգային կազմակերպություններից պահանջում է նպաստել մարդասիրական եւ բժշկական առաքելությունների տեղակայմանը, որպեսզի գնահատեն պատանդառված անձանց պայմանները, կոչ անում Եվրոպական խորհրդին նպատակային պատժամիջոցներ կիրառել Ադրբեջանի պաշտոնատար անձանց նկատմամբ, որոնք պատասխանատու են մարդու իրավունքների խախտումների համար, այդ թվում՝ դատավորներ Ջեյնալ Աղաեւի, Ջամալ Ռամազանովի եւ Անար Ռզաեւի նկատմամբ:

Արձագանքելով ադրբեջանական իշխանությունների՝ ՄԱԿ-ի կառույցները եւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի գրասենյակները փակելու որոշմանը՝ բանաձեւը խստորեն դատապարտում է այս քայլը եւ համարում, որ սա լրջորեն խոչընդոտում է միջազգային մարդասիրական ջանքերին ու մոնիթորինգի մեխանիզմներին: Բանաձեւը նաեւ կոչ է անում միջազգային քրեական դատարանին եւ վերջինիս գլխավոր դատախազին հետաքննել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ բռնի տեղահանումների, հետապնդումների եւ էթնիկ զտումների վերաբերյալ գործերը, ինչպես նաեւ ողջունում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի հայտարարությունը, որը պահանջում է անհապաղ ազատ արձակել եւ անվտանգ վերադարձնել Ադրբեջանում պահվող բոլոր ռազմագերիներին, պատանդներին եւ այլ կալանավորված անձանց:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՐՏԱՔՍՎԵԼ ԵՆ

Փետրվարին Վրաստանից արտաքսվել է 85 օտարերկրացի, ովքեր գտնվում էին երկրում առանց օրինական հիմքերի, հայտնում է «Նովոստի-Գրուզիան»՝ վկայակոչելով երկրի ՆԳՆ-ին: Արտաքսված օտարերկրացիների թվում են Իրանի, Թուրքիայի, Թուրքմենստանի, Ռուսաստանի, Ադրբեջանի, Հորդանանի, Նիգերիայի, Ալժիրի, Չինաստանի, Հայաստանի, Նեպալի, Հնդկաստանի, Իրաքի, Եգիպտոսի, Լիբանանի, Մյանմարի, Լիտվայի, Իսրայելի եւ Կամերունի քաղաքացիներ:

Օտարերկրացիների մի մասը ինքնակամ լքել է Վրաստանը, իսկ մյուսները բռնի կերպով վտարվել են երկրից՝ միգրացիոն վարչության կողմից: Այսուհետ նրանց բոլորի մուտքը երկիր արգելված է: Վրաստանից արտաքսված անօրինական ներգաղթյալների թիվը տարեցտարի աճում է: Երկրի ներքին գործերի նախարարության վիճակագրության համաձայն՝ 2024 թվականին նրանց թիվը հասել է 430-ի, 2023 թվականին՝ 190-ի, իսկ 2022 թվականին՝ 165-ի:

ՀԱՐՎԱԾ՝ ԴԱՄԱՍԿՈՍԻՆ

Իսրայելական օդուժը ավիահարված է հասցրել Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսի Դումար շրջանի բնակելի շենքի ուղղությամբ: Այս մասին հայտնում է Syria TV-ին: Տեղեկություններ կան ավիահարվածի հետեւանքով վիրավորների մասին, սակայն այլ մանրամասներ չեն հաղորդվում:

Հրատարակության տվյալներով՝ իսրայելական գրոհի թիրախ է դարձել Դամասկոսի արվարձանում գտնվող պաղեստինցիներից մեկը:

Չնայած սիրիական կողմը հաղորդում է բնակելի շենքի վրա իրականացված հարվածի մասին, Իսրայելի պաշտպանության բանակը հայտարարել է, որ օդուժը հարձակում է իրականացրել Դամասկոսում գտնվող «Իսլամական ջիհադ» շարժման հրամանատարական կենտրոնի վրա:

«Հրամանատարական կենտրոնն օգտագործվում էր պաղեստինյան Իսլամական ջիհադի կողմից Իսրայել պետության դեմ ահաբեկչական գործողություններ պլանավորելու եւ ուղղորդելու համար», - նշված է հաղորդագրության մեջ:

Իր հերթին, Իսրայելի պաշտպանության նախարար Իսրայել Կացը հաստատել է Դամասկոսի վրա հարձակումը՝նշելով. «Մենք թույլ չենք տա, որ Սիրիան սպառնալիք դառնա մեզ համար»:

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՃԵՊԱԶՐՈՒՅՑԸ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկայացրել է, թե Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի նախագծի չհամաձայնեցված որ երկու դրույթների առնչությամբ է հայկական կողմը համաձայնություն տվել: Փաշինյանն այս թեմային անդրադարձել է լրագրողների հետ զրույցում:

«Արձանագրենք, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության եւ միջպետական հարաբերությունների հաստատման համաձայնագրի տեքստի վերաբերյալ բանակցություններն ավարտված են տեքստի համաձայնեցմամբ, ինչը, կարծում եմ, կարեւոր իրադարձություն է», - ասել է Փաշինյանը:

Վարչապետը վստահեցրել է, որ այդ տեքստում հանրությունից ոչ մի գաղտնիք չունեն: Ինչ վերաբերում է դրա հրապարակման վերաբերյալ հարցին՝ նա նկատել է. «Հոդված-հոդված, առանձին, այսպես թե այնպես, հրապարակվել է: Չեմ կարծում, թե կարելի է ասել, որ հանրությունը բովանդակությանը ծանոթ չէ: Այո, հանրությունը տեքստը չի կարդացել, բայց չենք կարող ասել, որ բովանդակությանը ծանոթ չէ: 4 տարի է արդեն, որ բանակցում ենք տեքստի շուրջ, ըստ էության, հայտնի է»:

Նա վերահաստատել է՝ տեքստը պատրաստ է ստորագրման, հայկական կողմը պատրաստ է սկսել քննարկումները ստորագրման ժամկետների եւ տեղի մասին:

Անդրադառնալով Ադրբեջանի ԱԳՆ հայտարարությանը, որ պատրաստ են երկկողմ ֆորմատով բանակցություններ սկսելուն՝ Փաշինյանն ասել է. «Իրենք իրենց պատկերացումներն ունեն, մենք մեր պատկերացումներն ունենք: Ենթադրվում է, որ այդ քննարկումների ժամանակ կփորձենք պատկերացումները մոտեցնել»:

ՆԳՆ

ԻՆՉՊԵՍ Է ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԻ ԴԵՄ

Փետրվարի 12-ին Ազգային ժողովում քննարկվել է «Քրեական պատասխանատվություն նախատեսել քրեական ենթամշակույթ կրողի նկատմամբ»: Սրա վերաբերյալ ArmLur.am-ը կառավարությունում հարցեր է ուղղել ՆԳ նախարարին:

«Այս պահի դրությամբ քրեական պատասխանատվություն է նախատեսված [քրեական ենթամշակույթ կրողի] կարգավիճակ ստանալու, տալու, պահպանելու համար, սակայն կարգավիճակի գոյությունը, այսինքն՝ կարգավիճակ ունենալն ինքնին չի դիտարկվում որպես քրեական հանցագործություն»,- այդ մասին Ազգային ժողով-Կառավարություն հարցուպատասխանի ժամանակ ասել է ՆԳ նախարար Արփինե Սարգսյանը՝ անդրադառնալով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանի հարցին, թե ՆԳՆ-ն ինչ աշխատանք է կատարում քրեական ենթամշակույթը քաղաքացիների միջից արմատախիլ անելու համար:

«Վարչապետի հանձնարարականով մշակված է համապատասխան օրենսդրական նախաձեռնություն, որն առաջիկա օրերին կհանրայնացվի, որով կարգավիճակ ունենալն ինքնին կդիտարկվի որպես քրեական պատասխանատվության առարկա: Սրանով կկարողանանք փոփոխություն մտցնել պրակտիկայում որոշակի առումով, որովհետեւ այն ապացուցման շեմը, որն այս պահի դրությամբ առաջարկվում է պահպանման տրամաբանության մեջ, շատ ավելի հեշտ կլինի՝ ապացուցելու համար կարգավիճակի գոյության կոնտեքստում», - ասել է նա:

Ըստ նախարարի՝ հանցավորության կանխարգելման մեթոդաբանության փոփոխության առումով էլ խնդիր կա, ուստի հանցավորության կանխարգելման նոր ռազմավարություն է մշակվելու:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը, որ 2020 թվականի սեպտեմբերին ընդունված օրենքով փորձում էր պայքարել քրեական կարգավիճակ ստանալու, տալու եւ պահպանելու դեմ, հիմա՝5 տարի անց, հասկացել է, որ Ռուստամ Բաղասյանի բերած օրինագիծը ձախողեց քրեական ենթամշակույթի դեմ պայքարը: Փետրվարի 12-ին ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը ՀՀ ԱԺ-ում հայտարարեց, որ գործող օրենքում փոփոխություններ են պատրաստում, որպեսզի քրեական բարձր աստիճանակարգ ունենալու կարգավիճակի գոյությունը եւ ունենալը դառնա քրեական հանցագործություն:

«Ժողովուրդ» օրաթերթին ՔՊ-ականները բացատրեցին, որ Կառավարությունը փորձում է գնալ հարեւան Վրաստանի օրինակով. կձերբակալեն այսպես ասած «օրենքով գողերին», տեսախցիկի առջեւ հարց կտան. «Դուք «օրենքով գո՞ղ» եք, կամ քրեական աստիճանակարգում բարձր դիրք ունե՞ք, թե՞ ոչ»: Եթե մարդը պատասխանեց՝ «այո», ուրեմն կկալանավորվի, եթե «ոչ»՝ ազատ կարձակեն: Բայց «ոչ» պատասխանն էլ իր խնդիրներն է առաջացնելու, քանի որ «օրենքով գողը», ըստ լեգենդների, չի կարող չխոստովանել իր կարգավիճակի մասին. նա կհեղինակազրկվի:

Ինչ կտա այս փոփոխությունների ընդունումը՝ բարդ է ասել, քանի որ դժվար է պատկերացնել, թե ինչպես պետք է հարցը ձեւակերպեն, որ քրեական աշխարհի ներկայացուցիչը մանեւրելու տեղ չունենա:

Հիշեցնենք՝նախարար Սարգսյանը հայտարարել էր. «Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի շրջանակներում խնդիր ունենք օպերատիվ հետախուզական տվյալներն ապացույցի վերածելու մասով, որովհետեւ շատ հաճախ կարող են լինել այնպիսի օպերատիվ տվյալներ, որոնք, այո, կարող են քրեական ենթամշակույթ կրող խմբավորման գոյության մասին վկայել, բայց երբ խոսում ենք քրեական վարույթի մասին, որտեղ պետք է քրեական հետապնդում հարուցվի, շատ կարեւոր է տվյալը վերածել ապացույցի, որը փաստացի չի ստացվում»:

Այսինքն՝ նախարարը հրապարակավ խոստովանեց այն, ինչի մասին «Ժողովուրդ» օրաթերթը գրում էր օրենքի ընդունումից՝2020 թվականի սեպտեմբերից սկսած, իսկ նախկին նախարար, օրենքի հեղինակ Ռուստամ Բաղասյանը հոխորտում էր, թե օրենքը լավ էլ աշխատում է, լրատվամիջոցներն են ոչ պրոֆեսիոնալ:

Ինչեւէ, նախարար Արփինե Սարգսյանի հայտարարությունից անցել է 22 օր, բայց նախագծից ԱԺ ՔՊ-ական պատգամավորները դեռ տեղյակ չեն:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԽՈՄՆԱԿԸ ՀՐԱՎԻՐՎԵԼ Է ՀԱՐՅԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ArmLur.am-ին հասած տեղեկություններ համաձայն՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի խոսնակ Նազելի Բաղդասարյանը հրավիրվել է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտե եւ իր բնակարանի գողության դեպքով հարցաքննվել:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ նախաքննական մարմինը նրան տուժող է ճանաչել: Տեղեկությունը փորձեցինք անձամբ պարզել նազելի Բաղդասարյանից, սակայն վերջինս չպատասխանեց մեր հեռախոսազանգերին:

Իսկ ահա Քննչական կոմիտեից հայտնեցին, որ Նազելի Բաղդասարյանը տուժող է ճանաչվել, նախաքննությունը շարունակվում է: Նշենք, որ Նազելի Բաղդասարյանը հայտնել էր, որ «Շուրջ 2 մլն 700 հազար դրամի չափով ոսկյա զարդեր են եղել: Մի քանի մատանի, ականջօղեր, վզնոց, կախազարդ, այդ թվում՝ գողացվել էին արդուզարդեր, որոնք ոսկյա չէին, սակայն ինձ համար թանկ էին: Մեկ ոսկեգույն ժամացույց էլ կար: Մտածել էին՝ ոսկյա է, դա էլ են տարել»,- ասաց Բաղդասարյանը: Հավելելնք, որ Փետրվարի 25-ին հայտնի դարձավ, որ ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանի տունը թալանել են: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ գողերը նրա տուն են մտել անխոչընդոտ՝ հարմարեցված բանալիով տան դուռը բացելով: Ըստ Նազելի Բաղդասարյանի մերձավորների՝ վարչապետի խոսնակին գողերը պատճառել են մոտ 50 հազար ԱՄՆ դոլարի վնաս, սակայն վարչապետի խոսնակը նշում է, թե 2 մլն 700 հազար դրամի չափով ոսկյա զարդեր են տարել: Փաստ է մեկ բան, որ թալանից անցել է 2 շաբաթ, սակայն չկան ո՛չ գողերը ո՛չ էլ գողոնը ու իրավապահները փնտրում են ու փնտրում: Հիշեցնենք, որ դեկտեմբերի 29-ին «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հրաչյա Հակոբյանի առանձնատունը թալանել էին: Նա 7-8 մլն դրամի վնաս է կրել: «Տարել էին գումար, ոսկեղեն, մեկ ժամացույց: Կանխիկ գումարը 3 մլն դրամ էր»,-հայտնել էր պատագամավորը: Ի դեպ դեպքը տեղի էր ունեցել դեկտեմբերի 29-ին, բայց նա հունվարի 14-ին է դիմել ոստիկանություն, որովհետեւ այդ ժամանակ է ԱՄՆ-ից վերադարձել Հայաստան:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԴՐՈՆԻ ՄԻՋՈՑՈՎ ՓՈԽԱՆՑԵԼ ԵՆ ՔԿ

Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության «Սեւան» տարածքային բաժնում ստացվել էին օպերատիվ տեղեկություններ անօդաչու թռչող սարքի (դրոնի) միջոցով ՀՀ ԱՆ «Սեւան» քրեակատարողական հիմնարկ արգելված իրերի հնարավոր ներնետման մասին: Քրեակատարողական ծառայությունից ArmLur.am ին հայտնել են, որ մարտի 11-ին՝ ժամը 19:00-ի սահմաններում, հիմնարկի բնակելի գոտում ծառայություն իրականացնելիս անվտանգության ապահովման բաժնի ծառայողները լսել են դրոնի, ապա առարկայի վայր ընկնելու ձայն: Վերջիններս անմիջապես գնացել են նշված վայր եւ նկատել դատապարտյալների շարժ: Ծառայողները, զննելով տարածքը, հայտնաբերել են մետաղական կախիչով ամրացված պլաստմասե տարա, որում առկա են եղել սպունգով եւ շինարարական փրփուրով փաթեթավորված 2 բջջային հեռախոս: Դեպքի առթիվ ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Մարտի 12-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 02:05-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Երեւան քաղաքի վարչությունում եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Մալաթիայի բաժնում տեղեկություն է ստացվել, որ դանակահարության հետեւանքով «կրծքավանդակի եւ որովայնի շրջանի կտրած-ծակած վերքեր» ախտորոշմամբ շտապօգնության թիվ 74 խումբը «Աստղիկ» բժշկական կենտրոն է տեղափոխել մի քաղաքացու: Ոստիկանության Մալաթիայի բաժնի ծառայողներին բժիշկները հայտնել են, որ վիրավորը ի վիճակի չէ կատարվածի մասին բացատրություն տալու, քանի որ գտնվում է վիրահատարանում: Ոստիկաններին հաջողվել է պարզել, որ բուժօգնության տեղափոխվածը Երեւանի բնակիչ 33-ամյա Գնել Խ.-ն է, ով անծանոթ անձանց կողմից է դանակահարվել:

Դեպքի փաստով ոստիկանության Մալաթիայի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Մալաթիայի քննչական բաժին:

ԴԻ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Մարտի 12-ին ահազանգ է ստացվել, որ Արզնի ՀԷԿ-ի ճնշման ավազանում մաքրման աշխատանքներ իրականացնելիս տղամարդու դի է հայտնաբերվել. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ: Փրկարարները ճնշման ավազանից (մոտ 4 մետր) դուրս են բերել դին եւ մոտեցրել շտապօգնության մեքենային:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝մարտի 12-ից 13-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 138 դեպք, որից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԱՐԶՊԵՏՆ ԱՆՏԵՂՅԱ՞Կ Է

2024 թվականի մարտի 28-ի որոշմամբ նույն տարվա հուլիսին կայացել է Դիլիջան քաղաքի Ուսանողական 70 հասցեում գործող «Դիլիջանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի եւ Դիլիջան քաղաքի Ուսանողական 74 հասցեում գործող «Դիլիջանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի միավորումը: Միավորված քոլեջը կոչվում է Դիլիջանի պետական բազմագործառութային քոլեջ: Դիլիջանի բազմագործառութային քոլեջի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել նախկինում Դիլիջանի պետական քոլեջի տնօրեն Վահագն Հովհաննիսյանը: Մոտ 2 ամիս առաջ կայացել է Դիլիջանի բազմագործառութային քոլեջի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ: Այդ քոլեջի կառավարման խորհրդի նախագահը Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանն է: Մրցույթին Դիլիջանի բազմագործառութային քոլեջի տնօրենի միակ հավակնորդը եղել է Վահագն Հովհաննիսյանը: Մրցույթը չի կայացել, քանի որ ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչը չի ներկայացել: Նախարարությունից հայտնել են, որ նա այդ օրը այլ հրատապ գործ ուներ: Դիլիջանից տեղեկացանք, որ մարտի 4-ին նշանակված նույն մրցույթը կրկին չի կայացել: Քոլեջի տնօրենի ԺՊ Վահագն Հովհաննիսյանը չպատասխանեց մեր բազմաթիվ հեռախոսազանգերին, երեւի վատ է զգում, որ այդպես էլ իրեն քոլեջի տնօրեն չեն ընտրել: Դիլիջան համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանը մարտի 11-ին որոշում է ընդունել հաստատել Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար 2025 թվականի մարտի 12-ին նշանակված կրտսեր պաշտոնների մրցութային հանձնաժողովի անհատական կազմը, այդ կազմում 6-րդ համարով նշված է Վահագն Հովհաննիսյանը, որի պաշտոնը որոշման մեջ գրված է՝ «Դիլիջանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրեն»: Համայնքի ղեկավարը, ով նաեւ քոլեջի կառավարման խորհրդի նախագահն է, չգիտի՞, որ Վահագն Հովհաննիսյանը Դիլիջանի պետական քոլեջի տնօրենը չէ, նման հիմնարկ այլեւս չկա, այլ կա Դիլիջանի պետական բազմագործառութային քոլեջ:

ՀԵՏԱՁԳՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

«Տավուշի մարզում իրականացվող սուբվենցիոն ո՞ր ծրագրերն են հետաձգվել 2023 եւ 2024 թվականներից, որո՞նք են դրանց հետաձգման պատճառները, ե՞րբ են այդ ծրագրերն ավարտվելու»: Այս հարցերն ուղղել ենք Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին, սակայն նա չի հայտնել, թե մարզում որ ծրագրերն են հետաձգվել 2023 եւ 2024 թվականներից՝ հայտնելով. «Սուբվենցիոն ծրագրերը դինամիկ գործընթաց են (նախնական հայտի ներկայացումից մինչեւ շինարարական աշխատանքների ավարտը): Այն կարող է հաջորդ տարի տեղափոխվել լրամշակման աշխատանքների երկարաձգման, տեխնիկայի ձեռքբերման դեպքում՝ տեղափոխման խնդիրներով պայմանավորված, որոշ ծրագրերի դեպքում եղանակային անբարենպաստ պայմանների, երբեմն նաեւ անբարեխիղճ շինարարական կազմակերպության պատճառով»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԴԱԴԱՐԵՑՐԵԼ Է ՀԱՑԱԴՈՒԼԸ

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ՝ ԲԱՔՎԻ ԲԱՆՏԻՑ

Ռուբեն Վարդանյանը, որը 23 օր շարունակ գտնվում էր հացադուլի մեջ, երեկ դադարեցրեցին հացադուլը: Նա առողջական խնդիրներով է հղել: Այն ներկայացնում ենք ամբողջությամբ.

«Այսօր մարտի 12-ն է, իմ հացադուլի 23-րդ օրը: Ես գերազանց վիճակում եմ: Մի մտածեք, ամեն ինչ լավ է: Ես գիտակցում եմ՝ ինչ եմ անում, ինչի համար, եւ շնորհակալ եմ բոլորին՝ ձեր աջակցության եւ ապրումների համար:

Ցանկանում եմ դիմել բոլորին եւ խնդրել (անկախ նրանից, թե ինչպես եք ինձ վերաբերվում) լսել իմ այս ուղերձը: Հուսով եմ՝ այն կլինի պարզ ու հստակ: Ես դիտմամբ ազգանուններ չեմ նշում՝ չցանկանալով ուշադրությունը շեղել անձանց վրա:

Հացադուլ հայտարարելու համար ես մի քանի նպատակ ունեի.

Ցույց տալ, որ չկա իրական դատավարություն, այլ իրականացվում է ձեւական դատ,

Ցույց տալ, որ այստեղ ինձ միայն չեն դատում, դատում են բոլոր հայերին եւ հենց պետությանը,

Ցույց տալ, թե ինչ գին պետք է վճարեին նրանք, ովքեր կցանկանային մնալ ու ապրել այստեղ {Արցախում}, այլ չհեռանալ:

Ուզում եմ եւս մեկ անգամ հիշեցնել ռուսական հեքիաթից հայտնի ընտրության մասին. ընտրություն, որը պետք է կատարվի նժույգի՝ Հայրենիքի կորստի, սրի՝ պատվի կորստի եւ կյանքի կորստի միջեւ: Եվ հերոսը պետք է այդ ընտրությունը կատարի, քանի որ տեղում կանգնելը լիակատար ոչնչացում է: Այդ ընտրությունը հեշտ չէ, բայց այն պետք է արվի յուրաքանչյուրի կողմից, այդ թվում նրանց կողմից, ովքեր ապրել էին Արցախում, երբ տեղի ունեցավ այն, ինչ տեղի ունեցավ այս ընթացքում եւ մինչեւ այդ՝ վերջին երեսուն տարիներին, եւ մինչ այդ՝ հազարամյակների ընթացքում:

Այս վերջին դատական նիստը վառ օրինակ էր այն բանի, թե ինչ տեղի կունենար, եթե արցախցիները մնային իրենց տանը եւ ինչ գին կվճարեին դրա համար: Այդ նիստում Ստեփանակերտում ապրող երկու արցախահայ իմ դեմ ցուցմունք տվեցին՝ այդ թվում պնդելով տարբեր անհավանական բաներ: Ընդ որում, նրանք կյանքում ինձ չեն էլ տեսել, բացի այդ, նրանք իրենք էին գտնվում սարսափելի վիճակում, բայց այդուհանդերձ, հանդես եկան դատարանում, եւ ես նրանց շատ խղճացի:

Մարդն ամեն ինչի համար ինչ-որ գին է վճարում. եւ այն հայի օրինակը, որին ձերբակալել-տարել էին հենց Կարմիր Խաչի ավտոմեքենայից ու դատապարտել տասնհինգ տարվա ազատազրկման, եւ այս երկու անձանց օրինակը պարզ զգուշացնում է, որ ձեզ ձեր տներում հանգիստ թույլ չէին տա ապրել: Եվ յուրաքանչյուրը ցանկացած պահի կարող էր հայտնվել երեկվա երկու վկաների կամ՝ բոլոր սարսափելի հանցագործությունների մեջ մեղադրվողի տեղում: Ու բոլորովին կապ չունի՝ մեղավոր եք դուք, թե ոչ, կատարել եք այդ հանցագործությունները, թե ոչ:

Ցանկանում եմ առանձին նշել, որ այսօր այստեղ ցուցմունք է տալիս Արցախի նախկին նախագահը, իսկ Արցախի լեգիտիմ նախագահը գտնվում է Հայաստանում, եւ դա, հավատացեք, մեծապես փոխում է իրավիճակն ու այն խոսքերի կշիռը, որոնք այստեղ ասվում են նախկին նախագահի կողմից:

Զարմացած եմ Հայաստանի ներկայիս ղեկավարության՝ արցախցիների նկատմամբ ատելության խորությունից, եւ ուրախ եմ, որ խանգարեցի նրանց իրականացնել իրենց ծրագիրը, որը նրանք ամեն կերպ առաջ էին մղում եւ նպաստում էին, որպեսզի Արցախի որոշ լիդերներ՝ թե գործող, թե նախկին, իրականացնեն ուրիշի կողմից գրված այդ սցենարը, որպեսզի հետո իրավունք ունենային ասել. «Տեսեք, իսկ նրանց պատճառով զոհվեցին ձեր որդիները: Եվ դուք դեռ մեզ ե՞ք ինչ-որ բանում մեղադրում, իսկ նրանք ծախվեցին ու հիմա ուրախ-զվարթ կարող են ապրել, մինչդեռ դուք այստեղ ողջ կյանքում սգալու եք ձեր հարազատների կորուստը»:

Ուզում եմ բարոյական բոլոր հաշմանդամներին ասել, որ իրենք տանուլ են տվել. նրանք, ովքեր ցանկանում էին դա, եւ թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում համապատասխան քայլեր էին արել, եւ բոլոր նրանք, ովքեր հիմա հայտարարում են, թե ինչու մինչեւ վերջ չկռվեցին, այլ դուրս եկան: Ձեզ չի հաջողվել ոչնչացնել սովորական հայերի պատիվն ու արժանապատվությունը: Ոչ միայն արցախահայության, այլեւ բոլոր հայերի:

Տեղեկատվության կարգով ասեմ հետեւյալը: վերջին ռազմական գործողության ընթացքում մյուս կողմի կրած կորուստների պաշտոնապես ընդունված թիվը չորս անգամ գերազանցում է 44-օրյայի ժամանակ նրանց կորուստների թվին: Թող Հայրենիքի համար ընկածների հիշատակը միշտ վառ լինի:

Հացադուլիս 23-րդ օրը ես որոշել եմ այն դադարեցնել մի շարք պատճառներով եւ խնդրում եմ բոլոր նրանց, ովքեր միացել էին ինձ, նույնը անել: Համարում եմ, որ վերջին դատական նիստը պարզ ու հստակ ձեզ բոլորիդ ցույց տվեց, թե ինչ էր լինելու ձեզ հետ, եթե դուք մնայիք այստեղ {Արցախում}, եւ ինչ գին էիք ստիպված լինելու վճարել ձեր տանը, ձեր հայրենիքում ապրելու համար: Երկրորդը՝ ցույց տալ, որ սա ոչ թե դատավարություն է, այլ ձեւական դատ, եւ իմ պահանջները, իմ միջնորդությունները քննարկելու իմ օրինական իրավունքի հերթական մերժումը ցույց է տալիս, որ այստեղ դատավարություն չի լինելու, այս շոուն շարունակվելու է՝ անկախ ամեն ինչից:

Մի քանի օր առաջ իշխանության պաշտոնական ներկայացուցչի ելույթը ցույց տվեց այն ակնհայտ նպատակը, որ դատն իրականացվում է ոչ թե 15 գումարած մեկի, այլ Հայաստանի ղեկավարության ու Հայաստանի դեմ՝ որպես պետության ընդհանրապես, ցանկացած հայի դեմ՝ կապ չունի, որտեղից է նա, եթե անգամ նա Հայաստանից չէ:

Եվ վերջինը: Ով որ ձեզ վախեցնում է հերթական ռազմական պատերազմով՝ նորից մոլորեցնում է ձեզ: Այսօրվա աշխարհում սեփական պետությունն ունենալու իրավունքը տանուլ տալու շատ այլ միջոցներ կան: Արդեն պարտադիր չէ նվաճել ռազմական ճանապարհով, հիմա պատերազմը նորից է շարունակվում, պարզապես հնարավոր է առանց անգամ մեկ կրակոցի նվաճել տեխնոլոգիաների, ֆինանսների, տնտեսական կախվածության, ենթակառուցվածքների, ինֆորմացիայի, քաղաքական պատերազմների միջոցով: Եթե դուք այդպես էլ ապրեք պատրանքներում, թե ամեն ինչ վերջանալու է, եւ դուք հանգիստ կարող եք ապրել ու վաստակել, ապա դա ինքնախաբեություն է:

Արցախը կորցնելով՝ առաջիկա տարիներին մենք կկորցնենք նաեւ Հայաստանը, եթե արմատապես չփոխենք մեր վերաբերմունքն այնպիսի հասկացությունների նկատմամբ, թե ինչ է էլիտան, իշխանությունը, պետությունը եւ թե ով պետք է մեզ ղեկավարի: Լսեք ինձ եւ մտածեք այդ մասին, քանի դեռ ուշ չէ: Եվ հիշեք, միշտ, ինչպես հայկական հայտնի հեքիաթում, Քաջ Նազարին թագավոր է ընտրում ժողովուրդը, եւ դա մեր բոլորիս որոշման արդյունքն է, ոչ թե նրա:

Վստահ եմ, որ մեր ժողովրդի մեջ մենք ունենք առողջ ուժեր եւ որ այս ծանր ճգնաժամը մենք հաղթահարելու ենք, ինչպես որ արել ենք բազմաթիվ անգամներ մեր պատմության ընթացքում եւ կարողանալու ենք ոչ միայն պարզապես ապրել, այլ՝ արժանապատվ ապրել մեր հայրենիքում: Հիշեք, որ միայն ողջ մարդը կարող է լողալ հոսանքին հակառակ: Բոլորիդ գրկում եմ:

Ձեզ հետ միասին ձեր շարքային հայերից մեկը՝ Ռուբեն»:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 9 պատահար. 15 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԻՐԱՎԻՃԱԿ

ԾՐԱԳԻՐԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է

ՀՀ Կառավարությունը երեկվա նիստում որոշել է երկու ամսով երկարաձգել 44-օրյա պատերազմի ժամանակ անհետ կորած զինծառայողների ընտանիքներին 300-հազարական դրամ աջակցության ծրագիրը:

Ըստ գործող կարգավորումների՝ ծրագիրն ավարտվում է հունվարին, սակայն այս որոշմամբ զոհված զինծառայողների ընտանիքները փետրվար եւ մարտ ամիսների համար եւս կստանան աջակցությունը: Խոսքը թվով 22 անհետ կորած զինծառայողների ընտանիքների մասին է:

Որոշման ընդունման դեպքում շահառու հանդիսացող թվով 22 անհայտ կորած զինծառայողի ընտանիքի աջակցության տրամադրման ֆինանսական հաշվարկը 2025 թվականի փետրվար եւ մարտ ամիսների համար կազմում է 13.200.000 ՀՀ դրամ: Անհրաժեշտ միջոցները նախատեսվում է ներգրավել 2025 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը հատկացված միջոցների վերաբաշխումների հաշվին:

ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐԱՑԵԼ Է

2025 թվականի մարտի 12-ի դրությամբ Սեւանա լճի մակարդակը ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 37 սանտիմետր բարձրության վրա, ինչը 19 սանտիմետրով ավելի է 2024 թվականի նույն օրը գրանցված նիշից: ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ից, 2025 թվականի հունվարից մինչ մարտի 12-ն ընկած ժամանակահատվածում Արփա-Սեւան թունելային ջրատարով, ներառյալ ստորերկրյա հոսքը, Սեւանա լիճ է տեղափոխվել 4 միլիոն 313 հազար խմ ջուր: Սեւանա լիճ թափվող գետերում դիտվել է ջրի ելքերի որոշ մեծացում:

ՄՈԽՐԱՑԱԾ ԴԻ

Երեկ ողբերգական դեպք է տեղի ունեցել Երեւանում: Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Երեւանի քրեական վարչությունում եւ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Շենավիթի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Նոր Խարբերդի Անտառային փողոցի տներից մեկի հողամասում դի կա: Հրշեջները մարել են սեփական տան տարածքում եղած չոր խոտում ու եղեգներում առաջացած հրդեհը, որտեղ էլ հայտնաբերել են մոխրացած դի: Դեպքի փաստով Շենգավիթի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ: Ոստիկանությունն ու քննչական բաժինը պարզում են մահացածի ինքնությունը:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐՆ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԿԱՐՈՂԱՆԱ ՁԿՆԱՄԹԵՐՔ ԱՐՏԱՀԱՆԵԼ

Մարտի 16-ից Հայաստանն իրավունք կունենա սկսել ԵՄ երկրներ բարձրորակ ակվակուլտուրային ձկան եւ ձկնամթերքի արտահանումը: Այս մասին հայտնել է Հայաստանի սննդամթերքի անվտանգության տեսչության պետի տեղակալ Տիգրան Պետրոսյանը: Ըստ նրա՝ բանակցությունները տեւել են շուրջ 8 տարի, ինչի արդյունքում Հայաստանը դարձել է տարածաշրջանում առաջին երկիրը, որը իրավունք է ստացել բոլոր տեսակի ակվակուլտուրային ձուկ եւ ձկնամթերք արտահանել ԵՄ: Պետրոսյան հավելել է, որ ձեռնարկությունները պետք է ներառվեն TRACES համակարգում՝ կենդանական ծագման մթերքների վերահսկման եւ հետագծման բարելավման հավելվածում:

Նրա խոսքով՝ արտահանման վերջնական թույլտվությունը կտրամադրի Սննդի անվտանգության տեսչությունը՝ լաբորատոր հետազոտություններից եւ լիցենզիաներ տրամադրելուց հետո: Պետրոսյանի խոսքով՝ տնտեսվարող սուբյեկտները շահագրգռված են ապրանքներ արտահանել ԵՄ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության անասնաբուծության վարչության պետ Տիգրան Ալեքսանյանն իր հերթին վստահեցրել է, որ վերջին տարիներին հանրապետությունում ակտիվորեն զարգանում է ձկնաբուծության ոլորտը, եւ տնտեսվարողները համապատասխան տեխնոլոգիաներ են ներդնում ջրային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման եւ բարձրորակ արտադրանքի արտադրության համար:

Ըստ նրա՝ պետությունն աջակցության ծրագիր է իրականացնում այն տնտեսվարող սուբյեկտների համար, որոնք նորագույն տեխնոլոգիաներ են ներդնում եւ ձեռք են բերում հումքի վերամշակման սարքավորումներ: Նա համոզմունք հայտնեց, որ, ելնելով նաեւ կենսակլիմայական պայմաններից, Հայաստանում արտադրվող ձուկն ու ձկնամթերքը որակյալ են եւ մեծ պահանջարկ ունեն արտերկրում:

«Տարեցտարի արտադրության ծավալներն ավելանում են: 2024 թվականին արտադրվել է մոտ 27 հազար տոննա ձուկ եւ ձկնամթերք, ինչը 4-5 տոկոսով ավելի է նախորդ տարվա համեմատ»,- ընդգծել է Ալեքսանյանը: Պաշտոնյան հույս է հայտնել, որ ԵՄ արտահանման որոշումը խթան կհանդիսանա արտադրության տեմպերի բարձրացման համար:

Նա հավելել է, որ Հայաստանի ձկնաբուծության ոլորտն ինքնաբավ է եւ այս ցուցանիշով հետխորհրդային երկրների առաջին հնգյակում է:

«Հայաստանի ձկնաբույծների միություն» հասարակական կազմակերպության տնօրեն Գոռ Գրիգորյանն, իր հերթին պարզաբանել է, որ հանրապետությունում արտադրված 27 հազար տոննա ձկնամթերքից 15 հազար տոննան արտահանվել է: Ըստ նրա՝ Հայաստանից ձկան ու ձկնամթերքի արտահանումը նոր երեւույթ չէ: «Մեր երկիրն արտահանում է ապրանքներ Ռուսաստան, ԱՄԷ եւ ԱՄՆ, որոնք ունեն ԵՄ-ից ոչ պակաս խիստ պահանջներ»,- եզրափակել է փորձագետը:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ՝ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԳՈՐԾ ԱՐՔԻՑ

Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC), ՀՀ Ներքին գործերի նախարարության հետ համատեղ փրկել եւ Վայրի կենդանիների փրկարար կենտրոն (WRC) են տեղափոխել Երեւանի Սիլիկյան թաղամասում ավտոմեքենաների վերանորոգման կետում պահվող գորշ արջին: «Փրկարարական գործողությունը կատարվել է մտահոգ քաղաքացիների ահազանգից հետո, որոնք հիմնադրամին տեղեկացրել էին նեղ, խավար վանդակում պահվող արջի մասին: Կենդանին գտնվել է ծայրահեղ անբարենպաստ պայմաններում՝ զուրկ մասնագիտական խնամքից, համապատասխան սննդից եւ անհրաժեշտ կենսապայմաններից: Փրկության գործընթացին մասնակցել են նաեւ կենդանասերների համայնքի ներկայացուցիչներ, որոնք մտահոգ էին կենդանու ճակատագրի վերաբերյալ, ինչպես նաեւ Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի սաները:

Նախնական զննությամբ հայտնաբերվել են առողջական խնդիրներ: Անբարենպաստ պայմաններում պահելու հետեւանքով արջի թաթերը վնասվել են բետոնի վրա շարունակական քայլելուց, հայտնաբերվել են կոտրված ատամներ, ինչպես նաեւ նկատվել են սառցապատ հատակի վրա տեղաշարժվելու դժվարություններ:

«Գորշ արջը Հայաստանի Կարմիր գրքում գրանցված տեսակ է, եւ նրանց անօրինական պահելն ու կենդանու հանդեպ վատ վերաբերմունքը ոչ միայն դաժանություն է կենդանիների նկատմամբ, այլեւ պատժելի արարք»,-նշում է Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի տնօրեն Ռուբեն Խաչատրյանը:

ԿՐԿԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆԸ՝ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

«Կոնվերս» բանկը կրկին վերահաստատել է Հայաստանում առեւտրի ֆինանսավորման ոլորտում առաջատար դիրքը՝ վեցերորդ անգամ լավագույնը ճանաչվելով հեղինակավոր Global Finance ամսագրի «Առեւտրի ֆինանսավորող լավագույն բանկը Հայաստանում» անվանակարգում: Մրցանակաբաշխությունն իրականացվել է Ամստերդամում՝ «BAFT Europe Banking Awards 2025» համաժողովի շրջանակում, որտեղ «Կոնվերս» բանկը ներկայացրել է բանկի ֆինանսական տնօրեն, Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Հրանտ Հակոբյանը: «Կոնվերս» բանկի ֆինանսական տնօրեն Հրանտ Հակոբյանը, շնորհակալություն հայտնելով բարձր գնահատականի համար, նշել է. «Մեզ համար պատվավոր եւ պարտավորեցնող է առեւտրի ֆինանսավորման ոլորտում բանկի ջանքերին տրված այս բարձր գնահատականը: Այն ոչ միայն վկայում է ոլորտում հաջողությունների, արդյունավետության մասին, այլեւ մղում է նորարարական լուծումների, շարունակական զարգացումների, որոնք թույլ կտան այսուհետ եւս պահպանել առաջատարի դիրքերը առեւտրի ֆինանսավորման ոլորտում»:

«Կոնվերս» բանկը Հայաստանում առեւտրի ֆինանսավորման ընդգրկուն ծառայություններ առաջարկող ֆինանսական հաստատություն է: Այն կիրառում է բիզնեսի ֆինանսավորման լայն գործիքակազմ՝ սկսած վարկավորումից մինչեւ առեւտրի ֆինանսավորման գործիքների ու վերաֆինանսավորման միջազգային ֆոնդերի կիրառմամբ ֆինանսավորման բարդ սխեմաներ՝ ապահովելով սպասարկման բարձր որակ:

«Կոնվերս» բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՏԱՐԵԴԱՐՁ. ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

«ԵԿԵԼ ԵՄ ՀԵՌՈՒ ԻՐԱՆԻՑ, ՀԱՅՐԵՆԻՔՍ Է ԽԱՆԻ ՄԱԿՈՒՆ»

Յուրաքանչյուր մեծ հայի ծննդյան օր հայ գրականության էջերում կարեւորագույն իրադարձություն է: Երեկ հայ գրականության հսկաներից մեկի՝ Եղիշե Չարենցի ծննդյան օրն էր:

ArmLur.am-ը ներկայացնում է Չարենցի կյանքից հետաքրքիր դրվագներ:

Ամենայուրահատուկ դիպվածներից են Կարինե Քոթանճյանի հուշերը Չարենցի մասին:

Կարինե Քոթանճյանը պատմել է, որ 1914 թ. հունիս ամսին, երբ այգում զբոսնել է ընկերների հետ աչքն ընկել է կանաչ շապոյով, բաց շագանակագույն թիկնոցով, ծխամորճով եւ մեծ ձեռնափայտով մի պատանու:

«Տղան հագնված էր իր հասակին ոչ համապատասխան: Տարօրինակ էր նաեւ կեցվածքը: Գլխարկն աչքերին քաշած՝ նա մեկ ձեռնափայտը նետում էր վեր, մեկ բռնում, մեկ գետնի վրա ինչ-որ գծում, խզմզում: Գլխարկի տակից փայլում էին նրա աչքերը, խորաթափանց եւ, ինչպես ինձ այն ժամանակ թվաց, չար արտահայտությամբ: Տղաներից հետաքրքրվեցի, թե ով է այդ երիտասարդը: «Բանաստեղծ է»,- ասացին: Աղջիկները ծիծաղեցին այդ պատասխանից՝ «ֆուտուրիստ է» բացականչելով:

Զբոսնելիս մի երկու օր անընդհատ հետեւում էի տղային եւ այն եզրակացությանը եկա, որ նա տարօրինակություններ է անում՝ չարանալով աղջիկների վրա, որոնց հետ ծանոթ չէ եւ շատ կուզեր ծանոթանալ: Միտքս ասացի իմ ընկերներին: Նրանց տարօրինակ թվաց այդ արտասովոր տղայի հետ մտերմանալու առաջարկը, սկզբում ծիծաղեցին, հետո հայտարարեցին, որ ստիպված կլինեն ընկերություն չանել ինձ հետ. չար է տղան, եւ իրենք չեն պատկերացնում մտերմություն նրա հետ: Ես համառեցի, եւ մեր ընկերներից մեկի ուղեկցությամբ մոտեցանք Եղիշեին: Ձեռքս մեկնելով՝ առաջարկեցի նրան, որ ծանոթներ լինենք: Թերեւս ծաղր համարելով իմ առաջարկը՝ նա ծույլ շարժվեց տեղում, արժանապատվությամբ բարձրացավ, եւ մենք ծանոթացանք», - իր հուշերում պատմել է Կարինե Քոթանճյանը:

Քոթանճյանը նաեւ պատմել է, որ համոզվել է՝ չի չսխալվելու. Չարենցը եղել է բավականին բարեհամբույր անձնավորություն, ի զարմանք Կարինե Քոթանճյանի ու ընկերուհիների՝ խելոք, կարդացած ու զարգացած է եղել:

«Հենց առաջին իսկ զրույցից ես զգացի, որ սխալված չեմ. խելոք էր երիտասարդը՝ կարդացած, զարգացած եւ, որքան էլ զարմանք պատճառելու լիներ ինձ եւ իմ ընկերուհիներին, բարեհամբույր: Շուտով Եղիշեի հետ ծանոթացան նաեւ մեր աղջիկներից մի քանիսը: Այնուհետեւ մենք միշտ միասին էինք լինում, միասին զբոսնում, նավակ նստում, զրուցում ժամերով: Պիեսներ էինք պատրաստում եւ ներկայացնում, մեծ մասամբ մեր տանը: Վերահաս պատերազմը բաժանեց բոլորիս, դպրոցները փոխադրվեցին Թիֆլիս: Զախողվեց ռազմաճակատ մեկնելու իմ ցանկությունը (ընկերուհիս՝ քանդակագործուհի Այծեմնիկ Ուրարտուն, սպառնաց, թե կհայտնի ծնողներիս): Մեկնեցի Թիֆլիս, բայց չկարողացա ստիպել ինձ շարունակելու կրթությունս, մտա հոսպիտալ՝ աշխատելու որպես քույր: Ամռանը վերադարձա Կարս: Չեմ հիշում, թե որ թերթում կարդացինք Հովհաննես Թումանյանի կոչը՝ ուղղված հայ օրիորդներին. «Ով իսկական հայրենասեր է, թող գնա էջմիածին՝ օգնելու պատերի տակ բնաջնջվող գաղթականությանը, որբերին»: Առանց մտածելու մեկնեցի էջմիածին, հենց ուղղակի շատ սիրելի Թումանյանի մոտ. սկզբում նա համոզեց վերադառնալ եւ շարունակել ուսումը. «Հայրենասեր օրիորդը կրթություն ստանալով կարող է ավելի օգտակար լինել հայրենիքին», - ասաց նա, նկարագրելով գաղթականների սոսկալի դրությունը էջմիածնում: Հետո իմ համառությանն ընդառաջելով՝ առաջարկեց զբաղվել որբերի խնամքով: Ամռանը, արձակուրդներին, վերադարձա Կարս: Հանդիպումներ, զրույցներ Եղիշեի հետ, տրամադրեցի գալ Մոսկվա եւ սովորել: Չարենցը Մոսկվա եկավ 1916 թ. աշնանը, եթե չեմ սխալվում, սեպտեմբերի վերջերին եւ ընդունվեց Շանյավսկու համալսարանի պատմագրական ֆակուլտետը: Ապրում էր մի շատ փոքր սենյակում, որտեղ կար մահճակալ, սեղան եւ երկու աթոռ: Շատ պատկառելի եւ զգայուն տանտիրուհի ուներ, նա միշտ բողոքում էր, թե Եղիշեն օր ու գիշեր նստած գրում է ու գրում՝ առանց սնվելու, ընդունելով միայն քաղցր թունդ թեյ եւ ուրիշ ոչինչ: Խնդրում էր ինձ հաճախ այցելել եւ նրան դուրս բերել տնից: Այդ օրերին Չարենցը գրում էր «Ծիածանը»: Ինձ ոչինչ չէր ասել մինչեւ ավարտելը. հետո բնագիրը տվեց ինձ եւ խնդրեց կարդալ միասին: Նույն օրերին նա հորից ծանրոց ստացավ: Հայրը գրել էր, որ դրամ չի կարող ուղարկել, ուղարկում է գրպանի դանակներ եւ պարսկական փուշիներ: Մեծ էր Եղիշեի ուրախությունը.

Մոսկվայում նա շատ սուղ էր ապրում եւ հետո մտածում էր խնայած դրամներով հրատարակել «Ծիածանը»: Սակայն այդ դառն օրերին, ինչպես եւ հետո, Չարենցը երբեք չէր սիրում խոսք բացել նյութականի մասին, տրտնջալ աղքատությունից: Չափազանց հպարտ էր, արժանապատվությամբ լի, դրամ ունենալիս ծախսում էր առանց որեւէ հաշվենկատության, հետո նորից մնում առանց դրամի, խմելով շատ սիրած պարսկական թեյը»,- իր հուշերում պատմել է Քոթանճյանը:

Նկարիչ Մարտիրոս Սարյանը Չարենցի մասին եւս պատմել է իր հուշերը: Սարյանը գրել է, որ Չարենցն օժտված էր ստեղծագործական ծայրահեղ լարման հասնելու աներեւակայելի ուժով:

«Նա ոգեւորվում էր ինքնամոռացության աստիճանի եւ հուսահատվում՝ հասնելով խոր հիասթափության: Օժտված լինելով աշխարհի վերափոխմանը ամենաակտիվ կերպով մասնակցելու ներքին զորեղ պոտենցիալով՝ նա ոխերիմ թշնամի էր ամեն տիպի քարացած եւ դոգմատիկ մտածելակերպի: Նա անընդհատ ամենասուր կոնֆլիկտի մեջ էր գտնվում քարացած նախապաշարմունքների հետ կյանքի բոլոր ասպարեզներում եւ այդ կոնֆլիկտի մեջ էլ հաստատում էր իր ստեղծագործական նվաճումները: Հազվագյուտ սրությամբ էր նա զգում եւ գիտակցում հայ ժողովրդի ողբերգությունը եւ նույնպիսի ուժով խանդավառվում նրա երջանիկ վերածնունդով: Երեւույթները չափազանց սրությամբ վերապրելու Չարենցի բնավորությունը նրա կյանքի վերջին տարիներին հասցնում էր նրան այնպիսի աղետի, որ նրա բարեկամների, այդ թվում եւ իմ, խորհուրդներն ու թախանձանքները անզոր էին կանխել»,- իր հուշերում պատմել է Սարյանը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ նոր ծրագիր է մեկնարկել:

Բելգիայի «Նարեկ» հայկական կրթամշակութային միության եւ Վենետիկի Կա՛ֆոսկարի համալսարանի հետ համագործակցությամբ առաջին անգամ իրականացվել է հայագիտական կրթական ծրագիր՝ «Հայկական հետքը Վենետիկում» խորագրով: Ծրագիրը կյանքի է կոչվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից նախորդ տարվա ամռանը կազմակերպված Համահայկական կրթական 11-րդ խորհրդաժողովի արդյունքում, որին, ի թիվ սփյուռքի համայնքներում ազգային կրթության եւ դաստիարակության խնդիրներով զբաղվող տարբեր կառույցների, մասնակցել են նաեւ Կա՛ֆոսկար համալսարանի եւ «Նարեկ» հայկական կրթամշակութային միության ներկայացուցիչները:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԱՐԶԻՉԸ ԲԱՑԱՏՐԵԼ Է

Մադրիդի «Ռեալի» գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին բացատրել է, թե ինչու է պաշտպան Անտոնիո Ռուդիգերը «Ատլետիկոյի» դեմ պատասխան խաղում իրացրել հետխաղային 11-մետրանոց հարվածը, եւ ոչ հարձակվող Էնդրիկը: «Ցանկանում էինք, որ հինգերորդ հարվածն իրացնի Էնդրիկը, բայց որոշեցինք, որ Ռյուդիգերն ավելի հավաքված է: Մենք խոսեցինք այս մասին: Ես Էնդրիկին ասացի, որ մտադիր եմ նրան ընձեռել 5-րդ հարվածելու հնարավորությունը, բայց նա առանձնապես ուրախ չէր այդ առիթով: Եվ ես ասացի՝ «սպասեք, սպասեք»: Մենք ընտրություն պետք է կատարեինք Էնդրիկի եւ Ռյուդիգերի միջեւ: Ես տեսա Էնդրիկի դեմքը եւ ասացի. «Ավելի լավ է Ռյուդիգերը»»,- Անչելոտիի խոսքերն է մեջբերում RMC Sport-ը:

«Ռեալ»-«Ատլետիկո» հանդիպումը կայացել է նախօրեին՝ մարտի 12-ին: Թիմերը խաղացել են Իսպանիայի Մադրիդի Riyadh Air Metropolitano մարզադաշտում: Հանդիպումն ավարտվել է 1:0 հաշվով՝ հօգուտ «Ատլետիկոյի», սակայն հետխաղյա 11-մետրանոց հարվածաշարում «Ռեալն» ավելի դիպուկ է գտնվել՝ 4:2:

ԽԱՂԸ ԲԱՑ ԿԹՈՂՆԻ

«Լիվերպուլի» աջ պաշտպան Տրենտ Ալեքսանդր-Առնոլդը բաց կթողնի Անգլիայի լիգայի գավաթի եզրափակիչը «Նյուքասլի» դեմ, որը կկայանա այս կիրակի՝ մարտի 16-ին: Այս մասին հայտնում է Daily Mail-ը: Աղբյուրի տեղեկություններով՝ ֆուտբոլիստը կոճի մնասվածք է ստացել ՊՍԺ-ի հետ Չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակչի պատասխան հանդիպման ժամանակ, որն ավարտվել է փարիզյան թիմի հաղթանակով՝ 1:0 (11մ՝ 4:1) հաշվով: Նշվում է, որ մնասվածքն այնքան էլ լուրջ չէ, եւ հույս կա, որ այս մրցաշրջանում Ալեքսանդր-Առնոլդը կրկին կկարողանա խաղալ: «Նյուքասլի» դեմ առաջիկա խաղում Տրենտին կփոխարինի «Լիվերպուլի» մեկ այլ պաշտպան՝ Ջարել Քուանսան: Հիշեցնենք, որ ֆուտբոլիստի պայմանագիրը «Լիվերպուլի» հետ ավարտվում է այս տարվա հունիսի վերջին:

ԴՈՒՐՍ Է ԵԿԵԼ ԵԶՐԱՓԱԿԻՉ

Մադրիդի «Ռեալը» դուրս է եկել ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների լիգայի 2024/2025 մրցաշրջանի քառորդ եզրափակիչ՝ հետխաղյա 11-մետրանոց հարվածաշարում առավելության հասնելով «Ատլետիկոյի» նկատմամբ: Squawka վիճակագրական պորտալի փոխանցմամբ՝ Արքայական ակումբը չորս հաղթանակ է տարել այն բանից հետո, երբ դիմակայությունն անցել է 11-մետրանոցների շարքի: Չեմպիոնների լիգայի եւ Եվրոպայի չեմպիոնների գավաթի պատմության մեջ ոչ ոք նման վիճակագրություն չունի: Չեմպիոնների լիգայի ընթացիկ խաղարկության քառորդ եզրափակչում Մադրիդի «Ռեալը» կխաղա «Արսենալի» հետ: Առաջին հանդիպումը կկայանա Լոնդոնում ապրիլի 8-ին: Պատասխան խաղը կկայանա Մադրիդում ապրիլի 16-ին:

● Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում մայիսի 8-ին տեղի կունենա «Չորս պատճառ ամուսնության համար» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1500-4000 դր.:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասեք, թե ում եւ ինչ պայմաններում է տրամադրվում երկարամյա ծառայության կենսաթոշակը:

Լեւոն Հունանյան (65 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է քաղաքացիական ավիացիայի՝

1) թռիչքահրամանատարական, թռիչքահրահանգչական եւ թռիչքային անձնակազմերի անդամներին, բորտօպերատորներին եւ բորտուղեկցորդներին, եթե լրացել է նրանց 45 տարին, եւ նրանք աշխատել են առնվազն 25 օրացուցային տարի, որից առնվազն 20 տարին երկարամյա ծառայության ստաժ է, իսկ առողջական վիճակի պատճառով թռիչքային աշխատանքներից ազատվելու դեպքում՝ եթե նրանք աշխատել են առնվազն 20 օրացուցային տարի, որից առնվազն 15 տարին երկարամյա ծառայության ստաժ է.

2) օդային երթեւեկության կառավարման ծառայության կարգավարի (դիսպետչերի) վկայական ունեցող աշխատողին, եթե լրացել է նրա 50 տարին, եւ նա աշխատել է առնվազն 25 օրացուցային տարի, որից առնվազն 15 օրացուցային տարին անմիջականորեն կատարել է օդային երթեւեկության կառավարման աշխատանք, իսկ առողջական վիճակի պատճառով օդային երթեւեկության անմիջական կառավարման աշխատանքից ազատված անձին՝ եթե լրացել է նրա 50 տարին, եւ նա աշխատել է առնվազն 25 օրացուցային տարի, որից առնվազն 10 օրացուցային տարին անմիջականորեն կատարել է օդային երթեւեկության կառավարման աշխատանք.

3) ինժեներատեխնիկական ծառայության աշխատողին, եթե լրացել է նրա 55 տարին, եւ նա ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 20 օրացուցային տարին կատարել է երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է 63 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ է եկեղեցականների մի մասն առօրյայում հագնում սովորական սեւ կտորից կարված թիկնոց, իսկ ոմանք՝ սեւ ատլասից: Ի՞նչ է նշանակում այդ տարբերությունը:

Հրանուշ Աղայան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Սովորական սեւ կտորից կարված թիկնոց կրում են բոլոր ձեռնադրված հոգեւորականները՝ թե՛ քահանաները եւ թե՛ աբեղաները: Իսկ եթե կտորի մեջ փայլուն նախշեր կան, ապա այդ մարդը վարդապետ է կամ եպիսկոպոս, եւ իր հոգեւոր աստիճանը թույլ է տալիս կրել նման թիկնոց: Այդպես է նաեւ քահանաների՝ լանջախաչ կրելու դեպքում. եթե ամուսնացյալ քահանան մեծ լանջախաչ է կրում, ապա դա Վեհափառի հատուկ տնօրինությունն է՝ Եկեղեցում կատարած աստվածահաճո աշխատանքի համար:

Օրհնությամբ՝ Տ. Շմավոն քահանա Ղեւոնդյան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անցյալում նման թիկնոց կրելու համար պիտի լիներ Վեհափառ հայրապետի հատուկ թույլտվությունը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Իսրայելական օդուժը ավիահարված է հասցրել Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսի Դումար շրջանի բնակելի շենքի ուղղությամբ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 4 + 12+ 15
Կոտայքի լեռներ	0 - 3 + 11+ 14
Կոտայքի նախալեռներ	+ 2 + 4 +16 + 18
Գեղարքունիք	0 - 4 + 11+ 14
Լոռի	- 3 + 2 +15 + 18
Տավուշ	+ 1 + 5 +18 + 22
Արագածոտնի լեռներ	- 1 - 5 +14 + 18
Արագածոտնի նախալեռներ	+ 2 + 4 +15 + 18

Արարատ	+ 3 + 5 + 17+ 20
Արմավիր	+ 3 + 5 + 20+ 22
Վայոց ձորի լեռներ	- 11 - 14 - 6 - 9
Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 5 + 19+ 22
Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 + 20+ 24
Սյունիքի նախալեռներ	- 2 + 3 +15 + 18
ԼՂՀ	- 2 + 3 +15 + 19
Երեւան	+ 2 + 4 +14 + 16

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.3.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*